01.05.2025

ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆԻ ՈՒՂԵՐՁԸ ՄԱՅԻՍԻ 1-Ի՝ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՕՐՎԱ ԱՌԹԻՎ

Հարգելի հայրենակիցներ,

Սևան համայնքի հարգարժան բնակիչներ, համաքաղաքացիներ,

Ջերմորեն շնորհավորում եմ բոլորիս Մայիսի 1-ի՝ Աշխատանքի օրվա առթիվ, որը աշխատավորի և բարիք ստեղծող մարդու տոնն է, միաժամանակ լավագույն հնարավորություն է՝ բարձրաձայնելու աշխատանքի մարդու իրավունքների մասին, արժևորելու, արտահայտելու մեր վերաբերմունքն աշխատանքի և աշխատավորի հանդեպ:

Տոնի խորհուրդն է՝ փառաբանել աշխատանքն ու աշխատավորին, որի շնորհիվ արարվում է բարիք:

Բոլոր ժամանակներում էլ բարիք ստեղծող մարդու նկատմամբ հարգանքը եղել է ընդգծված, աշխատանքի մարդն արժանացել է ակնածանքի ու գնահատանքի:

Ես ցանկանում եմ, որ աշխատանքային կենսագրության առաջին քայլերն անող և արդեն մեծ փորձառություն ունեցող մարդիկ կարողանան արժանապատիվ վայելել իրենց աշխատանքի պտուղները ու իրենց աշխատանքով նպաստեն յուրաքանչյուրիս բարօրությանը և մեր համայնքի զարգացմանը:

Անկախ ժամանակներից և ժամանակի թելադրած պահանջներից՝ աշխատանքը եղել և մնում է մեր բարեկեցության հիմքը և կայունության երաշխիքը:

Թերևս կարևորն այն է, որ հավատանք մեզ, արժևորենք մեր աշխատանքը, այդ աշխատանքով ստեղծված արժեքները, որոնց շնորհիվ մեր համայնքն ու պետությունը դառնում են ներկայանալի:

Սևան համայնքում ապրում և իրենց աշխատանքով, աշխատասիրությամբ, նվիրումով, աչքի են ընկնում շատերը, որոնք իրենց աշխատանքի շնորհիվ վայելում են հարգանք ու մեծ պատիվ՝ դառնալով օրինակ մյուսների համար:

Սևան համայնքի սիրելի բնակիչներ

Այս տոնական օրն իմ, համայնքի ղեկավարի աշխատակազմի, բնակավայրերի վարչական ղեկավարների և համայնքի ավագանու անունից բոլորիդ հղում եմ մայիսմեկյան լավագույն բարեմաղթանքներ:

Սևան համայնքում գործող բոլոր կազմակերպությունների, հիմնարկների, հաստատությունների և ընկերությունների աշխատակիցներին, նրանց մաղթում աշխատանքով ամրագրված արժանապատիվ կյանք:

Համայնքի գյուղատնտեսության ոլորտի աշխատողներին, հողի մշակներին մաղթում եմ իրենց ստեղծած բարիքների արդյունքը վայելելու հնարավորություն, որը նաև մեր համայնքի բարօրության նախապայմաններից է:

Շնորհակալություն եմ հայտնում իրենց աշխատանքային պարտականությունները և ծառայությունը լավագույնս ու մեծ պատասխանատվությամբ կատարող մարդկանց, որոնց նվիրումի և մեծագույն պատասխանատվության շնորհիվ ապահովվում է մեր համայնքի բնականոն կյանքը, շնորհակալություն եմ հայտնում կամավորներին, որոնց անշահախնդիր աշխատանքը ևս մեկ հիմնաքար է ավելացնում մեր համայնքի ու երկրի ամրացման գործում:

Այսօր նաև վաստակած հանգստի անցած մարդկանց տոնն է, որոնք իրենց աշխատանքային կենսագրությամբ մնայուն հետք են թողել համայնքի զարգացման գործում:

Շնորհավորում և շնորհակալություն եմ հայտնում նրանց իրենց նվիրված գործունեության, համայնքի կյանքում ունեցած նշանակալի ներդրման համար, մաղթում երկարակեցություն և առողջություն:

Սիրելի հայրենակիցներ,

Մայիսմեկյան տոնի առթիվ ընդունեք բարեմաղթանք-շնորհավորանքներս, թող խաղաղությունը թևածի մեր երկրում և բոլորիդ օջախներում, թող աշխատանքը դառնա բոլորիս բարեկեցության աղբյուրը՝ ապահովելով մեր երկրի, համայնքի առաջընթացն ու կայուն զարգացումը: